ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Որոշման նախագիծը մշակվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների: «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մասնաշենքի ձմեռային այգու, Կեչուտ գյուղի մասնաշենքի երկու հարկերի, տանիքի և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի հիմնանորոգում» սոցիալական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման նպատակով անհրաժեշտ է Ջերմուկ համայնքի 2019 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել փոփոխություններ: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և Ջերմուկ համայնքի միջև ս/թ դեկտեմբերի 12-ին կնքվել է կապիտալ սուբվենցիայի հատկացման N 07 պայմանագիրը՝ 46591.0 հազար ՀՀ դրամ գումարով: Կապալառու կազմակերպությունների կողմից ներկայացված հիմնավոր փաստաթղթերի հիման վրա ս/թ դեկտեմբերի 26-ին Ջերմուկ համայնքի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» գործառնական դասակարգ-մամբ 900365000281 եկամտային հաշվի համարին հատկացվել է 28.930.020 /քսանութ միլիոն ինը հարյուր երեսուն հազար քսան/ ՀՀ դրամ՝ վերոնշյալ հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար: Ըստ այդ՝ Ջերմուկ համայնքի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» գործառնական դասակարգմամբ եկամտային և «09.01.01.51- նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգման («5113- շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդված) ծախսային հոդվածները պետք է ավելացնել 28.930.020 (քսանութ միլիոն ինը հարյուր երեսուն հազար քսան) ՀՀ դրամով՝ վերոնշյալ ծրագրերով կատարվող աշխատանքների ֆինանսավորման համար: Կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ավագանուն ի գիտություն ընդունելու է ներկայացվում Ջերմուկ համայնքի բյուջեն՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ՝

եկամուտներ՝ 768.930.020 ՀՀ դրամ

ծախսեր՝ 768.930.020 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**